

աւար յազթանակներ շահիլ : Իրաց այս կացութեան մէջ՝ Դաւիթ իր դիրքը ապահոված և թշնամիներու սպառնալիքը հետացուցած էր իրմէ, Հեղինէի խոստումները անպէտ նկատած և խզած էր Փորթուզալի հետ այնքան սուղ գնուած դաշնակցութիւնը :

Երբ Մատթէոսի յանձնարարող իրերը իրենց առջև դրուեցան, Հապէշները ըսին թէ ան Հայ էր և իրենց թագաւորին բաղձանքներուն ու նպատակներուն թարգմանը չէր կրնար ըլլալ : Ասով հանդերձ փորթուզալեան դեսպանութիւնը՝ ընկերակցութեամբ Մատթէոսի՝ մեկնեցաւ դէպի մայրաքաղաք :

Երկար ու տաժանելի եղաւ ճամբորդութիւնը անտառներու և լեռներու մէջէն, վայրի գազաններու սարսափին տակ : Երբ հասան Ս. Միքայէլի վանքը, ընդունուեցան վանականներէն : Հոն՝ Մատթէոս բաժնեց իր գոյքերը միւս ուղեկիցներու գոյքերէն և վանականներու պահպանութեան յանձնեց զանոնք, վասնզի շնորհազրկումի մը երկիւղը ունէր : Իր սնտուկներուն մէջ կային անշուշտ Փորթուզալէն բերուած դրամ և արժէքաւոր առարկաներ : Իր նախզուշութիւնը զուր էր, որովհետև ութ օր վերջ, տարափոխիկ տենդէ մը մեռաւ 48 ժամուան մէջ, Արգիզոյի Տէքոնա քաղաքը 1520 Մայիս 23ին :

Իր մահը պատճառ եղաւ Փորթուզալցիներու դեսպանութեան ձախողանքին, որովհետև միջնորդ թարգման չունենալով՝ անոնք նեղը մնացին :

Իեսպանութիւնը հինգ տարի մնաց Եթովպիա և դարձաւ՝ առանց իր նպատակները իրագործել կարենալու :

Հապէշ-Փորթուզալեան այս բարեկամական յարաբերութիւնները Եթովպիոյ վրայ միանգամայն դբակա՛ն և բացասական հետեւանքներ ունեցան :